# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061, bardzrasheni.hamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 20

## ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Ելնելով անհրաժեշտությունից համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. հողի օտարումից ֆոնդային բյուջեի եկամտային մասով մուտք եղած 4.280.342 դրամից 1.000.000 դրամ հատկացնել 06.04.01.51 գործառնական դասկարգման 5112 հոդվածին՝ համայնքի լուսավորության ցանցի վերանորոգման համար, իսկ 50.000 դրամ հատկացնել նույն գործառնական դասկարգման 5134 հոդվածին՝ համայնքի լուսավորության ցանցի հեղինակային հսկողության համար.

բ. 2.280.342 դրամը հատկացնել 04.05.01.59 գործառնական դասակարգման (փողոցների պահպանում և շահագործում)՝ 5112 հոդվածին, իսկ 1.000.000 դրամը հատկացնել նույն գործառնական դասակարգման 5134 հոդվածին նախագծահետազոտական ծախսերի համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061, bardzrasheni.hamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 21

### ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի բնակիչ՝ Սամվել Հովհաննիսյանին պատկանող ավտոմեքենայի՝ GAZ 20POBEDA մակնիշի, 24OO349 պետ.համարանիշի և մեքենայի վկայական հանձնումից հետ, գույքահարկի գծով՝ օրենքին տեղեկացված չլինելու պատճառով առաջացած տույժերը և տուգանքները, որը կազմում է 23841(քսաներեք հազար ութ հարյուր քառասունմեկ)դրամ՝ զիջել:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ**